Հրապարակվել է 28.09.2023թ.
Տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները
գործարքի կատարման պահին կարող են փոփոխված լինել:

Մանրամասների համար խնդրում ենք դիմել՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ,
գլխամասային գրասենյակ՝ Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ,
Հեռ.՝ +(37410) 59 20 19, +(37410) 59 20 20, +(37460) 37 25 00,
Whatsapp՝ +(37494) 44 11 88, Viber՝ +(37494) 44 11 88

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. **Խնայողական հաշվի (այսուհետ՝ Հաշիվ) ընդհանուր պայմաններ.**
   - **Հաշվետեր՝** ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ,
   - **Հաշվի տեսակը՝** անժամկետ,
   - **Հաշվի բացման արժույթը՝** ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար
   - **Հաշվի բացման նվազագույն/առավելագույն գումարը՝** չի սահմանվում,
   - **Հաշվի համալրում՝** առանց գումարի և հաճախականության սահմանափակման,
   - **Տոկոսների վճարման հաճախականությունը՝** ամսական կապիտալացում,
   - **Տոկոսների հաշվարկը՝** տոկոսները հաշվարկվում են օրական՝ յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ Հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ: Եթե տվյալ օրվա Հաշվի փաստացի մնացորդը փոքր է 20,000 ՀՀ դրամ, 50 ԱՄՆ դոլարից, ապա այդ օրվա համար տոկոսներ չեն հաշվարկվում: Եթե տվյալ օրվա Հաշվի փաստացի մնացորդը գերազանցում է 150,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլարը, ապա այդ օրվա համար տոկոսը հաշվարկվում է 150,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլարի նկատմամբ:
   - **Տոկոսների վճարումը՝** Բանկը հաշվարկված տոկոսները հաշվեգրում է Հաշվին (կապիտալացնում է) ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջին օրը: Հաճախորդի կողմից տվյալ ամսում հաշիվը փակելու դեպքում այդ ամսվա համար տոկոսագումարներ չեն վճարվում:
   - Ծառայության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ այցելելով Բանկի ինտերնետային կայք՝ www.amiobank.am կամ զանգահարելով (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00 հեռախոսահամարներով:
2. **Հաշվի տոկոսադրույքներն ըստ տեսակների և գումարային շեմերի.**

ՀՀ դրամ	Տարեկան (անվանական) տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
20,000 – ից մինչև 1 մլն. ՀՀ դրամ գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	3.50%	3.56%
1,000,001 – ից մինչև 5 մլն. ՀՀ դրամ գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	4.00%	4.07%
5,000,001 ՀՀ դրամ և ավել գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	4.50%	4.59%

ԱՄՆ դոլար	Տարեկան (անվանական) տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
50 – ից մինչև 3,000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	0.30%	0.30%
3,001 – ից մինչև 15,000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	0.40%	0.40%
15,001 ԱՄՆ դոլար և ավել գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք	0.50%	0.50%

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկի բանաձև՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
A - ավանդի սկզբնական գումարն է:
n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

3. **Հաշվի բացման, սպասարկման և փակման ընդհանուր պայմաններ և սակագներ.**
   - **Հաշիվը բացվում է անվճար**:
   - **Ընթացիկ ամսում հաշվի միջին մնացորդը 5,000 ՀՀ դրամ/15 ԱՄՆ դոլարից պակաս լինելու դեպքում գանձվում է սպասարկման վճար տվյալ ամսվա համար՝ 200 ՀՀ դրամի չափով:** Սպասարկման վճարի առկայության դեպքում

վճարը գանձվում է տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին օրը: Գանձման պահին Հաշվի կամ Հաճախորդի այլ հաշիվների վրա բավարար դրամական միջոցների բացակայության դեպքում տվյալ ամսվա սպասարկման վճարը գանձվում է Հաշվին կամ Հաճախորդի այլ հաշիվներին դրամական միջոցների մուտքագրման առաջին իսկ օրը:

- Հաշվով հնարավոր գործառնությունների (մուտքագրում, ելքագրում, փոխանցումներ, արտարժույթի փոխանակում և այլ գործառնություններ, այդ թվում՝ Ինտերնետ/Մոբայլ բանկինգ համակարգերով), Հաշվի քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման, Հաշվի պահպանման և այլ սակագները սահմանվում են համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների, որոնց կարելի է ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «Հաշվի սակագներ» բաժնում:
- Հաշիվը չի կարող օգտագործվել վարկային միջոցների ստացման նպատակով:
- Հաճախորդը ցանկացած պահի կարող է փակել Հաշիվը և ստանալ դրամական միջոցները: Հաշիվը փակելու դեպքում նախկինում վճարված տոկոսները Հաճախորդի կողմից վերադարձման ենթակա չեն: Հաշվի բացման օրվանից հաշված մինչև 60-րդ օրը ներառյալ Հաշիվը փակելու դեպքում գանձվելու է 1,500 ՀՀ դրամ վճար:
- Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի Հաշիվն առանց նախնական ծանուցման, եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում սակագներով սահմանված Հաշվի սպասարկման վճարները գանձելու համար կամ Հաշվով որևիցե գործարքներ չեն իրականացվել (սպասարկման վճարի կամ այլ միջնորդավճարների գանձումը և տոկոսի կապիտալացումը համարվում են գործարք):
- Հաշվի բացման պայմանագրի կնքման, գործառնությունների իրականացման, Հաշվի փակման համար անհրաժեշտ փաստաթղթերին կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի՝ www.amiobank.am «ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հաշվի բացման փաստաթղթերի ցանկ» բաժնում:
- **Հաշվի բացման, սպասարկման և/կամ դադարեցման ընթացքում, ելնելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պահանջից, «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքից, «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ»-ի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու անհրաժեշտությունից, ինչպես նաև հաշվի առնելով այլ տարաբնույթ հանգամանքներ՝ Բանկը կարող է պահանջել Հաճախորդից լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն**

4. Այլ լրացուցիչ պայմաններ.

- **Հաճախորդն իրավունք ունի հաղորդակցվել Բանկի հետ իր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կամ կապի այլ միջոցով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից): Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
- Հաշվի քաղվածքը Բանկը, համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, տրամադրում է Հաշվետիրոջը էլեկտրոնային եղանակով: Հաշվետերն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ դրանք փոստային կամ կապի այլ միջոցներով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից) ստանալու պայմանով: Ընդ որում, Հաշվետերն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը Բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Յուրաքանչյուր ամիս պարտադիր տրամադրվող քաղվածքները Բանկի կողմից տրամադրվում են անվճար:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու Հաշվի տարեկան տոկոսադրույքների չափը, եթե այլ բան նախատեսված չէ Հաշվի պայմանագրով:
- Պայմանագրի գործողության ընթացքում կատարված փոփոխությունները՝ պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը պարտավոր է գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Ավանդատուին՝ նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ-ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման ՀՀ տարածքում՝ ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով, ԱՀ տարածքում՝ 5% (հինգ տոկոսի) չափով, իսկ օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից՝ 10% (տաս տոկոսի) չափով:**

5. Վեճերի լուծման կարգը և Հաճախորդի իրավունքների պաշտպանությունը՝

- Հաշիվը և դրանում առկա դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:
- Առանց Հաճախորդի կարգադրության Հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:
- Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ նման համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում, Ավանդատուն կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դատարան:
- Բանկը պարտավոր է քննել Հաճախորդի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Հաճախորդը իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:
- Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տալ վերջնական պատասխան: Բանկի պատասխանը Հաճախորդին չբավարարելու դեպքում, վերջինս վեց ամսվա ընթացքում կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կամ դիմել դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվել են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են

կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

6. **Երաշխավորված ավանդի չափերը՝**
   - «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
   - Երաշխավորվում են Հաճախորդի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված ավանդների հետևյալ չափերը.
   - եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.
   - եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.
   - եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ տասնվեց միլիոն հայկական դրամով.
   - եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
   - Հաճախորդի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:
   - **Տոկոսների հաշվարկի օրինակ.**

Հաշվի սկզբնական գումար	500,000 ՀՀ դրամ
Ներդրման ամսաթիվ	01.06.2023թ.
Տարեկան պարզ տոկոսադրույք	3.5%
Տոկոսների առաջին կապիտալացման ամսաթիվ	30.06.2023թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո)	500,000*3.5/100/365*30 = 1,438.36 ՀՀ դրամ 1,438.36-1,438.36*10/100 = 1294.52 ՀՀ դրամ
Հաշվի վերջնական մնացորդ առ 30.06.2023թ.	500,000+1294.52 = 501,294.52 ՀՀ դրամ
Հաշվի համալրում 01.07.2023թ.-ին	100,000 ՀՀ դրամ
Տոկոսների երկրորդ կապիտալացման ամսաթիվ	31.07.2023թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո)	601,294.52*3.5/100/365*31 = 1,787.41 ՀՀ դրամ 1,787.41-1,787.41*10/100 = 1,608.67 ՀՀ դրամ
Հաշվի վերջնական մնացորդ առ 31.07.2023թ.	601,294.52+1,608.67 = 602,903.19 ՀՀ դրամ
Տոկոսների երրորդ կապիտալացման ամսաթիվ	31.08.2023թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո)	602,903.19*3.5/100/365*31 = 1,792.19 ՀՀ դրամ 1,792.19-1,792.19*10/100 = 1,612.97 ՀՀ դրամ
Հաշվի վերջնական մնացորդ առ 31.08.2023թ.	602,903.19+1,612.97 = 604,516.16 ՀՀ դրամ
Տոկոսների չորրորդ կապիտալացման ամսաթիվ	30.09.2023թ.
Կապիտալացվող տոկոսագումար Կապիտալացվող զուտ տոկոսագումար (10% հարկումից հետո) (չի հաշվարկվում Ավանդի վճարման օրը)	604,516.16*3.5/100/365*30 = 1,739.02 ՀՀ դրամ 1,739.02-1,739.02*10/100 = 1565.12 ՀՀ դրամ
Հաշվի վերջնական մնացորդ առ 30.09.2023թ.	604,516.16+1565.12 = 606,081.28 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՌ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԷ»: Կայքի հղումն է www.fininfo.am:

7. **Այլ տեղեկություններ՝**
   - **Գրանցման վկայական՝** թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
   - **Ծառայությունների ցանկը, որը Բանկն իրավունք ունի մատուցել՝** համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: **Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից**